Հարյուր տարվա մարդասիրություն

BookMark

Գոհար Մանուկյան

Հարյուր տարվա մարդասիրություն

Հայկական Կարմիր խաչը 1920-ից ի վեր

ԵՐԵՎԱՆ
2021

BookMark

ՀՏԴ 614.885:341.33:94(479.25)
ԳՄԴ 51.16+67.412+63.3(5Հ)
Մ 283

Մանուկյան Գոհար
Մ 283 Հարյուր տարվա մարդասիրություն: Հայկական Կարմիր խաչի ընկերությունը 1920-ից ի վեր / Գ. Մանուկյան.- Եր.: Newmag, 2021.- 312 էջ:

Ինչպե՞ս ստեղծվեց Հայկական Կարմիր խաչը, որո՞նք էին գործունեության ուղղությունները, ինչպե՞ս Հայաստանը դարձավ Կարմիր խաչի միջազգային շարժման լիիրավ անդամ և ինչպե՞ս հակազդեց պատերազմներին, երկրի ներքին խժդժություններին, բնական աղետներին, տնտեսական ու առողջապահական ցնցումներին: Այս բոլոր մարտահրավերները հաղթահարելով է կառույցը կերտել իր փայլուն կենսագրությունը:

Այս գիրքը պատմում է Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) անցած 100 տարվա պատմության մասին: Մեր ժողովրդի առաջ ծառացած մարդասիրական մարտահրավերներին արձագանքելու համար ստեղծվելով մեկ դար առաջ՝ ՀԿԽԸ-ն անցել է զարգացման երկար ճանապարհ՝ դառնալով երկրում գործող վստահելի ու եզակի կազմակերպություն: Այդ ուղին լի է եղել խոչընդոտներով, դժվարություններով և ձեռքբերումներով:

ՀՏԴ 614.885:341.33:94(479.25)
ԳՄԴ 51.16+67.412+63.3(5Հ)

ISBN 978-9939-884-25-7
Այս գրքի հայերեն հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Գիրքը հրատարակվել է Հայկական Կարմիր խաչի ընկերության պատվերով և կնքված պայմանագրով:

Բովանդակություն

	Մեծ հոբելյանի առիթով	15
	Նախաբան	21
Գլուխ 1	**Հիմնադրումից մինչև 1930-ականներ**	23
Գլուխ 2	**Կարմիր խաչը Խորհրդային Հայաստանում**	63
Գլուխ 3	**1988 թվական. Հայկական Կարմիր խաչի գործունեության նոր փուլը**	117
Գլուխ 4	**Հայաստանի Կարմիր խաչը ԽՍՀՄ վերջին տարիներին**	143
Գլուխ 5	**ՀԿԽԸ-ն ՀՀ անկախության հռչակումից հետո**	155
Գլուխ6	**COVID-19 և Ղարաբաղյան հակամարտության սրացում**	267
	Ամփոփում	281
	Ծանոթագրություններ	283
	Լուսանկարների հեղինակներ	292

BookMark

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման հիմնարար սկզբունքները

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

•

ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

•

ՉԵՋՈՔՈՒԹՅՈՒՆ

•

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

•

ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

•

ԵԶԱԿԻՈՒԹՅՈՒՆ

•

ՀԱՄԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ

BookMark

ՀԿԽԸ առաքելությունը

Նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ: Նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են ազգաբնակչության խոցելիության պատճառ դառնալ: Ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:

ՀԿԽԸ նպատակը

Կազմակերպության հիմնական նպատակն է կանխարգելել և թեթևացնել մարդկային տառապանքները՝ անկախ ազգությունից, ռասսայական, սեռային, դասակարգային պատկանելությունից, կրոնական և քաղաքական հայացքներից:

BookMark

Պատմական տարեթվեր

1920 ՀՀ Պառլամենտը վավերացրեց ՀԿԽԸ կանոնադրությունը:

1921 ժամանակավոր դադարից հետո ՀԿԽ ընկերությունը վերսկսեց գործունեությունը:

1922 Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհի որոշմամբ շարունակվեց ՀԿԽԸ գործունեությունը, և վերահաստատվեց կանոնադրությունը:

1925 ՀԿԽ ընկերությունը դարձավ ԽՍՀՄ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների դաշինքի անդամ:

1992 ՀԿԽԸ 14-րդ համագումարը ՀԿԽ ընկերությունը հռչակեց ՀՀ-ում գործող Կարմիր խաչի միակ ազգային ընկերություն:

1992 ՀՀ-ում բացվեց ՀԿԽԸ «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնը:

1993 ՀՀ-ն միացավ 1949թ. ժնևի 4 կոնվենցիաներին և դրա 1977թ. 1-ին ու 2-րդ արձանագրություններին:

Bookmark

1993 ՀՀ Նախագահի հրամանագրով ՀԿԽ ընկերությունը ճանաչվեց կամավորության սկզբունքով գործող, Կարմիր խաչի ազգային միակ, անկախ և ինքնավար ընկերություն:

1995 Կարմիր խաչի միջազգային կոմիտեն ճանաչեց ՀԿԽ ընկերությունը:

1995 ՀԿԽ ընկերությունը դարձավ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի լիիրավ անդամ:

1997 ՀԿԽԸ հուշաքարը տեղադրվեց Իտալիայի Լոմբարդիա շրջանի Սոլֆերինո կոմունայի Կարմիր խաչի թանգարանում:

2002 ՀՀ ԱԺ-ն ընդունեց «Կարմիր խաչի և Կարմիր մահիկի խորհրդանշանների գործածության և պաշտպանության մասին» օրենքը:

2005 ՀԿԽԸ Նախագահությունը հաստատեց Հայկական Կարմիր խաչի ընկերության 11 մարզային և 1 տարածքային մասնաճյուղերի կանոնադրությունները:

2011 ՀՀ-ն միացավ Ժնևի կոնվենցիաների 2005թ. 3-րդ արձանագրությանը:

BookMark

- **Մխիթար Մնացականյան**
  Նախագահ
- **Աննա Եղիազարյան**
  Գլխավոր քարտուղար

Պատվավոր անդամներ

- **Աշոտ Սարգսյան**
  Պատվավոր նախագահ
- **Ռիտա Փարսադանյան**
  ՀԿԽԸ նախագահ (1975-1991)
- **Պիեռ Միշո**
  Ֆրանսիական Կարմիր խաչ
- **Գերհարդ Մայեր**
  Գերմանական Կարմիր խաչ
- **Մովսես Պողոսյան**
  Գերմանական Կարմիր խաչ
- **Քլաուս Հիկե**
  Բավարական Կարմիր խաչ
- **Մայքլ Վիբել**
  Գերմանական Կարմիր խաչ

BookMark

- **Գաֆուր Կուրման**
  Ռուսական Կարմիր խաչ
- **Կարլ Շայդե**
  Քահանա, Գթության խոհանոցի ղեկավար
- **Դերենիկ Դումանյան**
  ՀՀ Առողջապահության նախարար (2012-2014)
- **Գագիկ Մարտիրոսյան**
  ՀՀ Պետնախարար (1993-1995)
- **Հարություն Եսոյան**
  ՀԿԽԸ, փրկարար
- **Վալերի Վարդանյան**
  ՀԿԽԸ, փրկարար

BookMark

Մեծ հոբելյանի առիթով

Մխիթար Մնացականյան
ՀԿԽԸ նախագահ

Այս գիրքը պատմում է Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) անցած 100-ամյա ուղու մասին: ՀԿԽԸ-ն ստեղծվել է 100 տարի առաջ՝ մեր ժողովրդի առաջ ծառացած մարդասիրական մարտահրավերներին արձագանքելու համար, անցել է զարգացման երկար ճանապարհ ու դարձել երկրում գործող հզոր և վստահելի մարդասիրական կազմակերպություններից մեկը: Այդ ուղին լի է եղել մարտահրավերներով, ձեռքբերումներով ու դժվարություններով:

Մեր տարածաշրջանը շարունակում է մնալ անհանգիստ և լարված, որտեղ ճգնաժամերի հետևանքով խոցելի խմբերի մարդասիրական կարիքներն ավելի ու ավելի են խորանում: Այս վիճակում մարդասիրական կազմակերպությունների դերն ու նշանակությունն է՛լ ավելի են կարևորվում: Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացրել է իր առաքելությունը հենց այդ պատասխանատվության գիտակցությամբ:

Book mark